

Խ. ՄԱՏԻՆՅԱՆ
(ՄԻՆՈՒԵՑ)

Վ1412

ԳՈՐԾԵԳՈՒԼ

(Ինստիտուլի 3 պատկերմ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЫХ НАУК
Академии Наук
СССР

891.995

Մ-33

ԹԲՖԱ-ԽՍ-1928 թ.

Ա 29443
Խ. ՄԱՏԻՆՅԱՆ
(ՄԻՆՈՒՑ)

891.995
Մ-33

1928 N 545
2011-07

ԳՈՐԾԱԴՈՒՆ

(Ենցենիրովկա Յ պատկերով)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОДОХОДЕНИЯ
Академии Наук
СССР

Հ 8.28506

Խ-Բալի-Խ-1928 թ.

25.06.2013

77027



60265.67

Գրառեպիվար № 354

Թիֆլիս, ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Տրեստի 4-րդ տպարան, Պուշկինյան փ. № 3;

Տիրաժ 1000

ԳՈՐԾԱԴՐՈՒՅԼ

(ԻՆՍՑԵՆԻՐՈՎԿԱՆ Յ ՊԱՏԿԵՐՈՎ)

Գործող անձինք՝

1. Կարո	Բանվոր	40	տարեկան
2. Բարսեղ	»	35	»
3. Ավանեսով	»	40	»
4. Հակոբ	»	25	»
5. Գրիգոր	»	40	»
6. Սերոբ	»	24	»
7. Դերասիմ Յասսիչ, գործարանատեր		50	»
8. Յելենա Սերգևնա—Նրա կինը		38	»
9. Անդրեյ Իվանիչ—Նրա կառավարիչը		45	»
10. Մարգուշ, Նրա աղջկը		11	»
11. Ոսիկ, Նրա տղան		9	»
12. Անուշ—աղախինը		26	»
13. Բեգլար—լրտեսը		40	»
14. Ճառափառ Փողոցում		—	—
15. Ա. Ճայն		—	—

16. Բ. ձայն	—
17. Գ. ձայն	—
19. Դ. ձայն, փողոցում	—
20. Ամբոխ,	—
21. Յերգեցիկ խումբ փողոցում	—
22. Սոնա, Կարոյի մայըը	50
23. Սիրան, հարևանի կինը	55
24. Սուրիկ, Կարոյի տղան	12
24. Շուշան, նրա կինը	30

Ծանոթություն.—Այս պիյեսը, ինչպես ամեն մի մասսայական պիյես, պահանջում է խիստ դիսցիլինա, կուլիսներում, ապա թե վոչ, (մանավանդ բ. պատկերում, յերբ բանվօրական ցույցն է փողոցում), ապավորությունը կթուլանա: Սցենարիուսից շատ բան է կախված. նա ներսի և զրախ խոսակցությունը պիտի համաձայնեցնի իրար, վորպեսզի խոսքերն ու տրաքցները ճիշտ ժամանակին լինեն և շփոթություն չառաջանա: Ճառախոսը պիտի լինի կամ կուլիսների խորքում կամ բեմ տանող կիսափակ դռան հետեւին, վորպեսզի հասարակությունը զգա, վոր ցույցը, իսկապես, փողոցումն է: Իհարկե, խոսքս վերաբերում է դպրոցներին, վորտեղ բեմագրելու տեսակետից գեռ անփորձ են:

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է գործարանի մի մասը: Այ և ձախ կողմերում մի-մի դազգահներ, կաշվե ժապավեններով միացած առաստաղի հետ: Պատերից կախած են զանազան գործիքներ: Սեղաններին ամրացրած են սեղմիչներ, վորոնց վրա յերկաթ են խարտոցում: Դազգահների տեղ կարելի յէ դնել սեղաններ, առջեկց կացնել նկարած դազգահներ և յերեսը դարձնել գեպի ժողովուրդը: (Վարագույրը բացվելիս լսվում են մուրճերի զարկեր, յերկաթի զրնգոց, վորոնք հետզհետե հանդարտվում են, և խոսելիս միայն լսվում են թեթև թխկոցներ):

Տ Ե Վ Ի Լ Ի

ԿԱՐՈ.—(Քրի տակ յերգում ե մարսելյեզ):

ԲԱՐՍԵՂ. (Քիչ նես մոտենալով Կարոյին, կամացուկ).—Տհ, կամաց, ինչ ես ձենդ գլուխդ զցել, (ցույց տալով մյուս կողմը).—Հես տեսնում հոտոտող շունը ման և գալիս:

ԿԱՐՈ.—Բարը գլուխը: (Նարունակում ե աշխատել յեվ յերգել):

ԲԱՐՍԵՂ.—Կարո, լսել ես, վոր կառավարիչը խազեյնին ասել ե, վոր միթոմ դու ուզում ես գործարանի բանվորների մեջ բունթ զցես:

ԿԱՐՈ.—Հը, բանիդ կաց, ի՞նչ ե, վախում ես:

ԲԱՐՄԵԴ. Ինչի պիտի վախենամ, բայց յես ուզում եմ իմանամ, դու գիտե՞ս ով ե այդ խաբար տանողը:

ԿԱՐՈՒ. — Յանիմ Բեգլարը չի:

ԲԱՐԵԼ. — Հա:

ԿԱՐՈ.—Գիտեմ, նա կտանի խաբարը, բա ով կտանի:

ԲԱՐՄԵՂ,—Են որը տուն գնալիս ասում եմ.—«Բեղլար, լավ բան չի, վոր դու բանվոր մարդ, մեր ընկերների գաղտնիքները հայտնում ես կառավարիչին, նա յել խազելինին:

ԿԱՐՈ. — Բա, նա ի՞նչ է ասում:

ԲԱՐՍԵՂ. — Ինչ պիտի ասի. ասում ե. «Եղ ասող շան վորդու աեղն ասի, տեսնեմ նաև լե խաբար տանողը, թե լիս»:

ԿԱՐՈ (ձեռքի դնելով Բարսեղի ուսին). — **Բարսեղ**, **գիտե՞ս** ինչ:

ԲԱՐԵԴՀ. — ՀՐ:

ԿԱՐՈՒ. — Մինչև հիմա յես ել ենքան չեյի հավատում, թե Բեգ-
լարը լրտես ե. ասում եյի. «Խոսք ե ելի՛, ասում են, սուս ու
փուս մարդու վրա միշտ կկասկածեն»: Բանից յերկում ե, զոր իս-
կապես լրտես ե, բանվոր չի:

ԲՈՐՈՅԵԼ (զարվացած).—Ի՞նչ ես ասում, բանվոր չի:

ԿԱՐՈ.—Հա, քեզ ասում եմ, վոր բանվոր չի, լրտես ե: (Սյան այն կողմը նայելով).—Խազեցինը նրան գործ է տվել, վոր մեր գաղտնիքներն իմանա, հայտնի իրեն:

ԲԱՐՍԵՂ. — Տեսնում ես... իսկի մենք իմացել ենք, վոր նաըանվոր չեմ:

ԿԱՐՈ.—Յես ել եղ չեցի իմանա, յեթե Բագվից մեր ընկեր-ները չգրեյին, թե նա այնտեղ, Միքզոյեի նավթահանքում յերկար ժամանակ լրտեսություն ե արել:

ԲԱՐՄԱՆ. — Տեսնում ես դրան, բա դրա գլուխը չջարդենք իսկ եռ ինչո՞ւ չես ինձ շուտ ասել:

ԿԱՐՈՒՅՈՒՆ ՅԵՍՈՒՍ ԱՊՈԼՈԿԻ ՄԵՐՈՅԱ ՊԱՌԱՀԱԳՐԵՐԻ Եմ:

ԲԱՐՍԵԴ (նկատելով կառավարչին).—**Սռս,** կառավարիչը զամփս է. (իսկուն գործի լեն անցնում):

S E C U R I T Y

ՆՐԱԾԻ յԵՎ ԿԱՌԱՎՄԱՐԻՑ

ԿԱՌԱՎԱՐԻՉ (բարկացած, պորտՔելլը կռան սակին, ներս և մՏնում).—Հր, ի՞նչ ե, զբույց ելիք ահում:

ԲԱՐՍԵՂ. — Զբույց չելինք անում: Հարցնում ելի կարոյին, — (յույց տալով) — ես երկաթն ելի խարտոցեմ, թե վոչ:
ԿԱՐԱՎԱՐԻՉ. — Գիտեմ... «Ելի խարտոցեմ, թե վոչ»... Դե,
եդուսակ բաներ չինի. յեթե մեկ ել տեսա, ձեր հետքը չի լինի
գործարանում: Դուք չգիտեք, վոր բանվորների ծուլության պատ-
ճառով խաղելինն ես տարի տասը հազար մանեթ վնաս ե քաշել.
վոր ամեն մեկն այդպես զրույց անի, ել եղ վնասը վնրտեղից
դուրս կգա, ես վերջին անգամը լինի հա... ել չտեսնեմ... (Գլ-
նում ե):

ԲԱՐՍԵՂ (ֆիչ նետ յետելից). — Արևդ վկա, գլուխդ մեռնի,
«տասը հազար մանեթ վնաս ե քաշել»... Տն, բա եսպես ել տնա-
մոթություն կլինի. որական 10 - 12 ժամ աշխատենք, մեր քրտին-
քը քամեն, ելի խաղելինը վնաս ե քաշեմ: (Հետեւից) Սուտի հերն
անիծվի, թե դա զարթ ե: (Աշխատում ե):

ԿԱՐՈ. — Հենց եդ խոսքերի համար ես խարտոցը բերանը կո-
խես, ենքան խարտոցես ատամները, հոգին դուրս գա: Բա խաղե-
լինի կնիկը, լակոտներն եղան շիկ են անում, բա եդ վնրտե-
ղից ե: Իրենք մեկի տեղ հազար են ծախսում, հետո ասում, վոր
մեր ծուլության պատճառով են վնաս քաշում: Գիտենք, գիտենք,

դա ինչ վնասներ են: Զեզ սաղ աշխարհքն ել տան, ելի կասեք—
«վնաս ենք անում»:

ԲԱՐՍԵՂ. — Կգա զրանց վերջը, կարո, կգա... իրենց արդար
պատիժը կստանան:

(Աշխատում են: Պատրա):

§ Ե Ս Ի Լ III

Նրանի յեվ Հակոբը

ՀԱԿՈԲ (այս ու այն կողմը նայելով, ծածուկ մեկնում ե մի
քուցիկ). — Կարո, կարդա, հետո տուր Բարսեղին:

ԲԱՐՍԵՂ. — Դա ինչ ե:

ԿԱՐՈ. — Թոռցիկ ե:

ՀԱԿՈԲ. — Զգուշ, Բեզլարը չտեսնի: (Գնում ե):

ԿԱՐՈ. — Բարսեղ, մի տես, կառավարիչը գնացել ե:

ԲԱՐՍԵՂ (գնում, նայում ե յեվ յետ դառնում). — Զկա, չի յե-
րկում:

ԿԱՐՈ (կարդում ե կամացուկ). — «Ընկերներ, վերջին ժամա-
նակներս գործարանատերերի սանձարձակության, լրբության չափն

անցել է: Արդեն ամեն տեղ 10—11 ժամվա բանվորական որր դարձրել են 12 ժ. և անխղճորեն շահագործում են մեզ: Նրանք տեսնում են, վոր դիմադրություն չկա, ավելի յեն ագահանում, և մենք վաղը, մյուս որը կտեսնենք, վոր 12 ժամը դարձրած ե 13—14 ժամ: (Ծածկում ե բռուցիկը, այս ու այն կողմ նայում):

ԲԱՐՄԵԴ. (ինձն ել նայելով).—Մի վախենա, շարունակի:

ԿԱՐՈ.—«Համբերության բաժակը լցվել է, դաժան կապիտալի հարձակման պիտի դիմադրենք, ապա թե վոչ կուլ ենք գնալու նրա անկուշտ վորկորին: Թիֆլիսի Սոցիալ-դեմոկրատական կենտրոնական կոմիտեն կոչ ե անում Թիֆլիսի պրոլետարիատին ամենուրեք դադարեցնել աշխատանքները, կուռ շարքերով դուրս գալ փողոց ցույցի և իր կտրուկ ու հզոր խոսքն ասել յերես առած բուրժուազիային: (Այս ու այն կողմն ե նայում):

ԿԱՐՈ.—«Ում մեջ բարձր ե հեղափոխական վոգին, ում մեջ կա հեղափոխական կայծ, ով պրոլետարիատի դատն իր սրտին մոտ ե ընդունում, թող նա թողնի գործարանը, լինի մեր կուռ շարքերում: Վախկոտները տեղ չունեն մեր շարքերում: Դեպի փողոց, դեպի պայքար:

Կորչի ցարական կառավարությունը, կեցցե՛ Թիֆլիսի պրոլե-

տարիատը, կորչի բուրժուազիան, կեցցե՛ Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Թիֆլիսի կոմիտե:

Ահա, այս ե թռուցիկի բովանդակությունը:

ԲԱՐՄԵԴ.—Այս, ինչ կոչ ե... հենց ասես, յես ինքս եմ խոսում եղ թռուցիկի տեղ:

ԿԱՐՈ.—Բարսեղ ջան, վոգեորելը լավ բան ե, բայց այժմ յանից հարկավոր ե բոլոր ընկերներին կազմակերպել, վոր քսանը չորսին վոչ-վոք գործի չկպչի, բոլորն ել դուրս գան ցույցի:

ԲԱՐՄԵԴ.—Այսինքն ինչպես ես ուզում կազմակերպենք:

ԿԱՐՈ.—Դե, իհարկե, մենք չենք կարող գործարանում ժողովանել, բոլորին միասին հավաքել:

Այսպես կանենք. հինգ-հինգ, յոթ-յոթ, տաս-տաս կհավաքվենք այս կամ այն ընկերոջ մոտ, ժողովներ կանենք, կկազմակերպվենք, այնուհետև խոսքներս մի, դուրս կգանք ցույցի:

ԲԱՐՄԵԴ.—Լավ ես ասում, այդպես անենք, բայց աշխատենք, վոչ-վոք չիմանա:

ԿԱՐՈ.—Վոչ-վոք, վոչ-վոք, ամեն ինչ ծածուկ:

(Այդ ժամանակ լսվում ե գործարանի մյուս մասում մարտվեցի մեղմ յերգը: Կարոն ու Բարսեղը վերացած լսումեն):

ԲԱՐՍԵՂ.—Ա՛խ, յերբ ե լինելու են որը, վոր բոլոր յերկիրների բանվորները միացած դուրս են գալու և վերջ տալու այս դրության:

ԿԱՐՈ. —Մի վախենա, Բարսեղ, ուշ չե, մի քանի անգամ, վոր կազմակերպված դուրս գանք ցույցի, ազատությունը հեռու չի լինի:

ԿԱՌԱՎԱՐԻՉ (գործարանի մյուս մասում).—Այս ի՞նչ ե, այս ի՞նչ յերգ ե:

ԲԱՐՍԵՂ.—Կառավարիչն ե, կառավարիչն ե: (Գործի յեն անցնում):

ԿԱՌԱՎԱՐԻՉ.—Ես ով ե յերգում: Յես ձեզ ցույց կտամ յերգել գործի ժամանակ: Բան, գործ միք անի, փողոցային յերգեր յերգեցեք: Ասացեք, տեսնեմ, եղ ով ե յերգում: (Լուրջուն): Ա՛, չեք ասում, խսքներդ մենք եք արել: Լավ, յես ձեզ ցույց կտամ: Ավանեսով, գործող թող, գործարանից դուրս յեկ, դու ել բանվոր չես:

ԱՎԱՆԵՍՈՎ.—Աղա, ինչու, ի՞նչ եմ արել, վոր դուրս եք անում:

ԿԱՌԱՎԱՐԻՉ.—Դուրս, դուրս, առանց վորե ե խոսքի: Առաջնը դու յես ձենդ բարձրացրել:

ԱՎԱՆԵՍՈՎ.—Աղա, ախը եղ ով ասում:

§ Ե Ա Խ Լ IV

Նրանի, կառավարիչ, Սերոբ, Գրիգոր,

Ավանեսով յեվ Հակոբ

ԿԱՌԱՎԱՐԻՉ.—Դուրս, հիմար, դուրս, վոչ-մի աղա բան չեմ հասկանում (իրենով բեմ ե դուրս բերում): Մինչև վոր գործարանից դուրս չանեն ձեզ, խելքի չեք գա:

ԱՎԱՆԵՍՈՎ.—Ախը, ասացեք, տեսնեմ, մեղքս ի՞նչ ե, վոր դուրս եք անում:

ԿԱՌԱՎ. —Դուրս, քեզ ասում եմ... ել վոչ-մի խոսք... բունտովշիկ հարամզադա...

ԱՎԱՆԵՍՈՎ.—Յես զիտեմ եղ ով ե խաբար ավել, յես նըանցույց կտամ (դուրս ե գնում):

ԿԱՐՈ (վոր այդ ժամանակ յեվ՝ աւխատում, յեվ՝ դիտում եր).—

Պարոն կառավարիչ, յեթե դուք Ավանեսովին դուրս անեք, մենք,
բոլորս գործներս կղադարեցնենք:

ԿԱՌԱՎ. (բարկացած).—ի՞նչ... ի՞նչ... Յեթե նրա համարցա-
վում ես, դու ինքդ ել կարող ես դուրս գալ, «բասչոտը» պատ-
րաստ ե:

ԲԱՐՍԵՂ.—Դուրս անելու մարդը մենք չենք. են մարդը, վոր
յեկել ե ձեզ խաբար տվել, նրան պիտի դուրս անել:

ԳՐԻԳՈՐ (վոր այդ ժամանակ զործիները ձեռքին, զործը
քողած, մի քանի բանվորների հետ յեկել եր աղմուկին).—Այս, պա-
րոն կառավարիչ, նրան դուրս անել:

ՄԵՐՈԲ (նույնպես).—Մեղավորը նա յե:

ԿԱՐՈ { Այս, նա յե:

ԿԱՌԱՎ. (զարկացած).—Այս ի՞նչ ե... Այս ի՞նչ ե....

ԳՐԻԳՈՐ.—Յեթե մեր գործարանում վորևէ բան ե լինում,
մեղքը նրա մեջ փնտրեցնք:

ԿԱՌԱՎ.—Եղ ում եք ասում:

ԲՈԼՈՐԸ.—Բեղլարին:

ԳՐԻԳՈՐ.—Հրեն, են լրտեսին:

ՏԵՍԻԼ

Նրանից յեկ բեգուր

ԲԵԳԼԱՐ (դուրս գալով բեմ, բարկացած).—Տն, յերբ ես տե-
սել, վոր ես կառավարիչին խաբար եմ տվել, աչքովդ տեսել ես:
Լրտեսը դու ինքդ ես:

ԲԱՐՍԵՂ.—Այս, դու յես խաբարներ տանողը, ի՞նչ-վոր այս
գործարան ես մտել, միշտ քո պատճառով կոփմներ են լինում:

ԿԱՌԱՎԱՐԻՉԶ.—Ի՞նչու յեք սրան մեղադրում: Ես խեղճը ինձ
վոչինչ չի ասել. Դուք կարող եք հաստատել:

ԿԱՐՈ (համարձակ).—Այս, կարող ենք հաստատել. Բագվում
դա Միրզոյեկի նավթահանքում ծառայեիս, միշտ բանվորներին մատ-
նել ե. բանվորները նրան այնտեղից դուրս են քշել:

ԲԵԳԼԱՐ (կատարած).—Ստում ես, յես ինքս եմ դուրս յեկել:
ԳՐԻԳՈՐ.—Տեսար, վոր ասում եմ լրտես ես յեղել:

ԲԵԳԼԱՐ (խփում ե Գրիգորին եվ ոձիքից քոնում).—Եղ ում
ես ասում լրտես:

ԳՐԻԳՈՐ.—Եղ ում ես խփում: (Խփում ե յեկ քոնում ոձիքից):

ԿԱՌԱՎ. (մեջ ընկնելով).—Եղ ի՞նչ եք անում, եղ ի՞նչ եք
անում:

ԿԱՐՈ
ԲԱՐՍԵՂ | (Ամեն կողմից բռնում են Բեգլարին):
ՍԵՐՈԲ

ԿԱՐՈ (Բեգլարին).—Բաց թող...

ԲԱՐՍԵՂ. —Բաց...

ՍԵՐՈԲ. —Ե՛յ...

ԲԵԳԼԱՐ (Գրիգորին).—Յես քեզ ցույց կտամ, թե ով ե լըր-
տեսը: (Քաշում ե ոձիից):

ԳՐԻԳՈՐ (Քաշելով ոձիից).—Յես ել քեզ ցույց կտամ, վոր
դու լրտես ես:

ԿԱՐՈ (Բեգլարին).—Քեզ ասում եմ բաց թող...

ԿԱՌԱՎԱՐԻԶ. —Վերջապես դուք հասկանում եք...

ԲԱՐՍԵՂ (Բեգլարին).—Տհ, գլուխդ ցավում ե...

ՍԵՐՈԲ. —Բաց թող:

ԿԱՌԱՎԱՐԻԶ. —Դուք հասկանում եք, թե վորտեղ եք գըտ-
նվում... (Բաժանում ե) Կառավարչի մոտ թույլ եք տալիս իրար
ծեծել:

60265.67

ԲԱՐՍԵՂ (բորում ե Բեգլարին).—Կորիր այստեղից, դու բան-
վոր չես, վոր մտել ես գործարան:

ԲՈԼՈՐԸ. —Դուրս, դուրս այստեղից:

ԿԱՐՈ. —Քո տեղը չե գործարանը:

ԲԵԳԼԱՐ (զայրացած զնում ե).—Կտեսնենք...

ԲԱՐՍԵՂ. —«Կտեսնենք»....:

ԿԱՌԱՎԱՐԻԶ. —Այս ինչ խայտառակություն ե, դուք ուզում
եք «դարագավոյ» կանչեմ: Ի՞նչ իրավունքով դուք գործարանում
իրավունքներ եք բանեցնում, սրան-նրան լրտես անվանում, ծե-
ծում:

ԿԱՐՈ. —Պարոն կառավարիչ, մենք իրավունքներ չենք բանեց-
նում, բայց ասում ենք, վոր Ավանեսովը վոչ մի մեղք չունի, վոր
ԲԵԳԼԱՐԻ խոսքով նրան դուրս եք անում:

ԲԱՐՍԵՂ. —Թող ԲԵԳԼԱՐԸ դուրս գա...

ԿԱՐՈ. —Յեթե Ավանեսովը մեղավոր ե, մենք բոլորս ենք մե-
ղավոր: Նրա հետ միասին մեզ ել դուրս արեք:

ԲՈԼՈՐԸ. —Այն, այն, մեզ ել:

ԿԱՌԱՎ. —Ինչպես յես տեսնում եմ, դուք բոլորովին փոխվել
եք... Դուք ուզում եք իմ տեղ  վիճակի վիճակը, իրավունքներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՍՀ Ակադեմիա
ՀԻՍՏՈՐԻԱ
ԲՈՒԺՈՒՄՆԱԴՅԱՆԻ
Ակադեմիա Հայոց
С С С Р

ՀԱՅՈ-ԱՐԱ. ССР

բանեցնել, գործարանից բանվորներ դուրս անել։ Այս գեղքից հետո այլևս ես ձեզ հետ խոսելիք չունեմ։ Յես խաղելինի հետ կխռում, թող նա կարգադրություն անի։ Այժմ գործներիդ կացեք։ (Դուրս ե գնում):

(Բանվորները ցրվում են իրենց տեղերը յեկ գործի անցնում։ Պառզա):

ԲԱՐՍԵՂ (Ժպտալով).—Կարոն, տեսան, կառավարիչը վոնց կակդեց. եսպես չանելինք, խեղճ Ավանեսովին դուրս եր անելու։ Տեսավ, վոր խոսքներս մեկ ա, թուլացավ։

ԿԱՐՈՆ.—Թող գնա խաղելինին ասի, մեզնից մեկն ու մեկն դուրս կանի, մենք ել մեր խոսքը կասենք։

ԲԱՐՍԵՂ (դես ու դեն նայելով).—Ռուր գնաց Ավանեսովը։ Ավանեսով, Ավանեսով։ Տո, Բնչ ես դուան մոտ կանգնել։ Արի, գնա գործիդ։

ԱՎԱՆԵՍՈՎ.—(Դուրս ե գալիս):

ԿԱՐՈՆ.—Մի վախենա, վոչ-վոք չի կարող քեզ դուրս անել։

ԲԱՐՍԵՂ.—Գնա գործիդ։

ԱՎԱՆԵՍՈՎ (գնալով).—Մենք ենք մեղավոր, վոր եղ լրտե-

աին դաս չենք տվել։ (Բոլորն ել աշխատում են, լավում ե քրըլսկոց-չրըլսկոց։ Պառզա):

ԲԱՐՍԵՂ (մյուս կողմում աշխատող բանվորներին ցածր ձայնով).—Տղեք, կառավարիչը գնաց։

ԳՐԻԳՈՐ (ներսից).—Հա, վոչ-վոք չկա։

ԲԱՐՍԵՂ.—Բեգլաբն ել։

ԳՐԻԳ.—Նա յել։

ԲԱՐՍԵՂ.—Տղեք, եսպես միշտ պինդ կացեք։

ԲՈԼՈՐԸ (ներսից).—Միշտ։

ԲԱՐՍԵՂ.—Գործադուլին ել։

ԲՈԼՈՐԸ.—Գործադուլին ել։

(Լավում ե մարսելյեզի մեղմ յերգը, իսկ Կարոն ու Բարսեղը ժպտում են):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Ի Ց Ր

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է գործարանատիրոջ հարուստ կահավորված սենյակը: Աջ և ձախ կողմերում դռներ, իսկ դիմացը՝ յերկու լուսամուտ: Մեջտեղը մի սեղան, վրեն թեյի բաժակներ, կոնյակ և այլն:

(Գերասիմ Յասիխն ու Անդրեյ Իվանիչը, սեղանի շուրջը նըստած, գրույց են անում):

Տ Ե Ս Ի Լ Ի

Գերասիմ Յասիխ, Անդրեյ Իվանիչ:

ԳԵՐ. ՅԱՍ. (քեյի բաժակը դիելով սեղանին).—ԱՆԴՐԵՅ ԻՎԱՆԻՉ, միթե յես այդ բոլորը չգիտեմ: Պարզ է, վոր մեր գործարանի խառնակիչները կարոն, Բարսեղն ու Ավանեսն են: Յես չեմ հասկանում... Նրանց փոշին չպիտի լինի գործարանում:

ԱՆԴՐ. ԻՎ.—ԵԼ յԵՐԲ:

ԳԵՐ. ՅԱՍ.—Բայց ինչ արած... Առայժմ պիտի համբերենք, մինչև վոր գրանց զահրումար գործադուն անցնի: Յեթե դրանց գործադուլը խաղաղ կանցնի, յես դրանց ցույց կտամ... կարո՞ւ

Բարսեղ, Ավանեսնվ... ինչ զատեր են, մի ըռպեյում գուրս կը թռչեն գործարանից:

ԱՆԴ. ԻՎԱՆԻՎ.—ԵԼԻՐ, ել ես ինչ կառավարիչ եմ, վոր նըստանց նման թուլաներն առաջիս խոսում են: Են որը հենց ասես կառավարիչը կարոն ու Բարսեղը լինելին... Ինձ դարձրել ելին մի կոպեկանոց... Այսպես ելին խոսում, կարծես գործարանատերն իրենք լինելին: Քիչ ե մուռմ զլիխիս նստեն... ԶԵ, Գերասիմ Յասիխ, ել ես չեմ կարող են գործարանում կառավարիչ լինել, վորտեղ կարոն ու Բարսեղն են:

Գ. ՅԱ. —ՀՐ, ԱՆԴՐԵՅ ԻՎԱՆԻՎ, ինչու, յես այդ չեմ հասկանում. յես ուզում եմ նըստանց պահեմ. յես ուզում եմ, վոր այդպիսի սրիկաները քո առաջ խոսեն... Ինչ արած, առայժմ պիտի հաշտվենք այս դրուժյան հետ: ԶԵս տեսնում, ինչպես են գազագել. կարծես, շղթայով կապած շներ լինեն, ուզում են բոլորիս ել պատառուեն: Բայց չես տեսնում, մի մահանի յեն ման գալիս, գործադուլ անեն, գուրս գան փողոց, մի կոփկ սարքեն, յեղածչեղածներս թալանեն:

§ Ե Պ Ի Լ Ա

Նրանի եվ Յելենա Սերգեյևնա.

ՅԵԼ. ՍԵՐԳ. (ներս մՏնելով).—Ո՛, ԱՆԴՐԵՅ ԻՎԱՆԻՉ, Ես զ՞ո՞ր խաչից... բարով եք յեկել. (Բարեվում ե):

ԱՆԴՐԵՅ ԻՎ. (վեր կենալով տեղից, համբուրում ե ձեռքը).—ՅԵԼԵՆԱ ՍԵՐԳԵյԵՎՆԱ, ինչո՞ւ վոր խաչից:

ՅԵԼ. ՍԵՐԳ. —Քանի ժամանակ ե չեք յերևում. ինչո՞ւ ձեր տիկնոջն ել չեք բերել, շատ ժամանակ ե նրան չեմ տեսնում: Խնդրեմ նստեցեք: (Նստով են):

ԳԵՐ. ՅԱՅ. —ԱՆԴՐԵՅ ԻՎԱՆԻՉՆ այնքան ե զբաղված, վոր իր տեղն անգամ մոռացել ե, ինչ մնաց, վոր տիկնոջն ել բերի:

ԱՆԴ. ԻՎԱՆԻՉ. —ՅԵԼԵՆԱ ՍԵՐԳԵյԵՎՆԱ, մեզ ել կարելի յե առել, ինչո՞ւ չենք գալիս: Գերասիմ Յասսիչը ճիշտն ասաց, վոր տեղներս անգամ մոռացել ենք: Վերջին ժամանակներս դլուխներս այնքան ե խառնվել բանվորների ձեռքին, վոր բոլորովին ժամանակ չենք ունենում գործարանից դուրս գալ:

ՅԵԼԵՆԱ. ՍԵՐԳ. —Ի՞նչ են ուզում դրանք:

ԱՆԴ. ԻՎ. (հեգնանիով).—Հա... հա... հա... ութ ժամվա բան-

վորական որ, ծուլությունն: Դեռ եղ բավական չե, քիչ ե մնում մեզ ել ծեծեն, գործարանից դուրս անեն, իրենք խազեյնություն անեն:

ՅԵԼ. Ս. —ՖԻ, Եղ եր պակաս, խազեյնություն:

ԳԵՐ. ՅԱՅ. (հեգնում ե).—Հա, հա, հա, խազեյնություն... ԶԵ վոր «սոցիալիստները» ասում են՝ գործարանները, ֆաբրիկաները բանվորներինը պիտի լինեն: Դե, տգետ բանվորներն ել, եղ խոսառւմներով խարված, իրենց «հոր» աշխատած ֆաբրիկաներն են ուզում ելի... վոտերս կոտանան:

ԱՆԴՐ. ԻՎ. (հեգնանի).—Բա, վոր ութ ժամյա բանվորական որ են ուզում: Ասում են կարլ Մարքսն եղպես ե զրել. «Ութ ժամ աշխատել, հետո գործարանի դռները կողպել, ութ ժամ քուչեքում թրե գալ, ութ ժամ մըափել, յերկու-յերիք ժամ ել զործից ուշանալ»...

ԳԵՐ. ՅԱՅ. —Խելագմբ գիտնական, իսկապես վոր բանվորները դրանից խելոք գիտնական ել չեյին կարող ունենալ: Կարինետում նստած՝ գլխին զոռ ե տվել, թե բանվորներին ութ ժամյա բանվորական որ ե հարկավոր: Այ... (ցույց ե տալիս բռունգը):

ԱՆԴ. ԻՎ. — Տղետ բանվորին ութ ժամյա բանվորական որ,
մեզ հետ հավասարություն...

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Յես չգիտեմ, ինչու յեն թույլ տվել հրատարակել նրա գրվածքները. միթե չեյին կարող վոչնչացնել. ել ինչու յեն այդքան վոստիկանություն պահում: Կարծես, կարլ Մարքսը պետություն ե, վոր որենքներ ե հրատարակում. «ութ ժամյա բանվորական որ, աշխատավարձի ավելացնեմ, քաղաքական իրավունքներ, ֆի...»

ԱՆԴ. ԻՎ. — Այս, այս, ՅԵԼԵՆԱ ՍԵՐԳԵԵՎՆԱՆ ճիշտ ե տառւմ. պետությունն ինքն ե մեղափոր, վոր թույլ ե տալիս նման տխմար գաղափարներ տարածել մութ ու խավար բանվորության մեջ և կատաղեցնել մեր դեմ:

ԳԵՐ. ՅԱՅ. — Ասում են, նա թողել ե յերեք հատորանոց իր խելագարի կտակը՝ կապիտալը և ինքը գերեզման իջել. բարով արժանանա բանվորությունն այդ կատակին, խոսք չունիմ, լավ կտակ ե. ամենալավ հայրը միայն կարող ե այդպիսի կտակ թողնել... Հա, հա, հա, (հեղինանինվ) «սոցիալիզմ, կոմմունիզմ»:

ԱՆԴ. ԻՎ. ՍԵՐ. — Հա, հա, հա, կարոն, Բարսեղը, սոցիալիզմ...

ԳԵՐ. ՅԱՅ. (հեղինանինվ). — Ավանեսովը կառավարաբության գըլուխ...

ՅԵԼ. Յ. — Մեր Անուշը ազատ քաղաքացի, հա, հա, հա...

ԱՆԴ. ԻՎ. — Բա մեր գործարանի սլեսար Մարկոսը Վարանցով-Դաշկովի պալատում:

(Բոլորը բահ-բահ ծիծառում են):

§ Ե Ս Ի Լ III

Նրանի, Մարգուշ, Ռոխլ, (դեռ դրսում)

ՄԱՐԳՈՒՇ. — Ասոված վկա, ճիշտ եմ ասում:

ՈՍԻԿ. — Ճիշտ չես ասում, չեմ հավատում:

ՄԱՐԳՈՒՇ. — Ղորթ, ղորթ եմ ասում:

ՈՍԻԿ. — Իսկ հայրիկն ինձ համար մի լավ ձի յէ գնելու, վոր ես նստեմ և ամեն որ քաղաքում զբունեմ:

ՄԱՐԳՈՒՇ (ուրախ ներս վագելով). — Մամա, մամա, ճիշտ չե, վոր ինձ համար մի ավտոմոբիլ ես գնելու: (Փարվում ե մորը):

ՈՍԻԿ (նրա հետեւլից). — Իսկ ինձ համար հայրիկը մի ձի: (Փարվում ե մորը): Այդպես չե, հայրիկ:

ԳԵՐ. ՅԱՍ. (ՇՈՅԵԼՈՎ գլուխը).—Այս, բալիկս, քեզ համար մի այնպիսի ձի, վոր բոլորը մատով ցույց տան:

ՄԱՐԳՈՒՀԾ.—Իմ ավտոմոբիլում միայն յես պիտի նստեմ Վարանցով-Դաշկովի նման, ել վոչ-վոք:

ՈՍԻԿ.—Իսկ իմ ձիս վրա յես:

ՅԵԼ. Ս.—Ի՞նչ անքաղաքավարի յեք, ներս եք մտնում և ԱՆԴՐԵՅ Իվանիչին չեք բարեւում, ամոթ ձեզ:

ՄԱՐԳ. | (ՈԵՎԵՐԱՆԻ ԵԲ անում յեվ բարեվում).—Բարե ձեզ:

ԱՆԴ. ԻՎ.—Բարե ձեզ, բալիկներ (ՇՈՅՈՒՄ Ե գլուխները): Բավական ժամանակ ե ձեզ չեմ տեսել. ինչքան մեծացել եք:

ՅԵԼ. Ս.—Այս, բալիկներս շատ են մեծացել: Դրանց մտադիր եմ այս ամառը տանել Գերմանիա՝ Կարլսբադի կուրորտը: Ասում են, վոր այս ամառը ահազին քանակությամբ հանգստացողներ են գնալու այնտեղ: Մենք ել ենք ուզում գնալ:

ՄԱՐԳ.—Ճիշտ, մամա

ՈՍԻԿ.—Յես վաղուց գիտեմ, վոր գնալու յենք, ինձ ասել ես, մամա:

ՅԵԼ. Ս.—Այս:

ԱՆԴ. ԻՎ.—Շատ լավ կլինի. հիանալի՛ տեղ ե:

ԳԵՐ. ՅԱՍ.—Յես վեց անգամ յեղել եմ այնտեղ, միակ հանգստանալու տեղն ե յերկրագնդիս վրա:

ՅԵԼ. Ս.—Ուղղակի ձանձրացել եմ կովկասի ամառանոցներից. միշտ Աբասթուման, Կիսլավնդսկ, Բորժոմ, Դիլիջան, Յագվերի... Ֆի, ինչ տեղեր են վոր...

ՄԱՐԳՈՒՀԾ.—Մամա, անպատճառ պիտի գնանք:

ՅԵԼ. ՍԵՐԳ.—Այս, բալիկս, անպատճառ:

ՈՍԻԿ (ուրախացած, բոչկոնտելով).—Ե՛յ, ջան, պիտի գնանք, պիտի գնանք...

ՄԱՐԳՈՒՀԾ.—Միասին, միասին...

ՈՍԻԿ.—Դու յել հայրիկ:

ԳԵՐ. ՅԱՍ.—Ինարկե, յես ել:

ՅԵԼ. ՍԵՐԳ.—Դե, այժմ գնացեք, խաղացեք:

ՄԱՐԳՈՒՀԾ | (Վագում են դուրս, գնալով).—Ե՛յ, ջան, գնալու յենք:

ՈՍԻԿ | Գնալու յենք:

ՄԱՐԳՈՒՀԾ.—Յես ավտոմոբիլս հետո եմ տանելու:

ՈՍԻԿ.—Իսկ յես ձիս:

ՄԱՐԳՈՒՅՆ.—Յես այժմյանից պատրաստվելու յեմ:
ՈՍԻԿ.—Յես ել:
ՄԱՐԳՈՒՅՆ.—Անուշ, անուշ:
ՈՍԻԿ.—Անուշ:
ՄԱՐԳՈՒՅՆ.—Պատրաստվիր:
ՈՍԻԿ.—Շորերը պատրաստիր: (Գնալով՝ այլեվս չի լսվում
նրանց ձայնը):

Գ. ՅԱՅ. (նրանց հետեւից).—Ա՛խ, մոռացա... Մարգուշ, Ոսիկ,
բակ դուրս չգաք և չխաղաք փողոցային լակոտների հետ: Զգիտեմ,
վհրտեղից են հավաքվում մեր բակը այդ լակոտները: Յելենա, դու
լուրջ ուշադրություն դարձրու. դայակին առա, վոր նրանց աշքա-
թող չանի, թե չե զանազան անկիրթ բանվորների, ծառայողների
յերեխաների հետ են ընկնում փչանում:

ՅԵԼ. Ս.—Յես ել եմ այդ նկատել: Արգելել եմ:

Գ. ՅԱՅ.—Բոլորովին մոռացել են ոսերեն լեզուն, բոլորովին.
միշտ հայեց են խոսում. ինչներիս ե պետք տիրացու հայ աղքի
այդ լեզուն. թող եղ լեզվով խոսեն գեղացիները, բարոչիները, մեզ
հարկավոր չի նա:

Յ. Ս.—Հաղար անդամ ասել եմ, մեր դայակին դուրս արա,
նորը վարձի, իսկ դու...

ԳԵՐ. ՅԱՅ.—Հա, Անդրեյ իվանիչ, յես ել անպատճառ գնա-
լու յեմ ամառանոց. ես ե, քանի տարի յե, չեմ լինում «զագրա-
նիցի» դաշեքում... Ուղղակի ջղերս քայքայվել են:

ԱՆԴ. ԻԿ.—Խորհուրդ կտամ. հանգստություն հարկավոր ե ձեզ
յերկարատե աշխատանքից հետո:

ՅԵԼ. ՍԵՐԳ.—Ել վհր որվա համար ենք աշխատում:

ԳԵՐ. ՅԱՅ.—Ես յերկիր չե, վոր մենք ապրում ենք. եշերի
յերկիր... ճարումս ճար լինի, մի որ ել ե այստեղ չեմ ապրի: Մի
քանի տարի յել ու հայդա:

ՅԵԼ. ՍԵՐԳ.—Հա, Գերասիմ ջան, մեր տեղը չի կովկասը: Ուր
շուր ես գալիս, կոշտ ու կոպիտ, մուռտար, գողեր, բունտովչիկ-
ներ, գյաղաներ:

§ Ե Ս Ի Լ IV

Նրանի եվ քեզար (ներս ե մտնում)

ԳԵՐ. ՅԱՅ. (հետաքրքիր).—Հը, ինչ յեղավ, ինչ տեսար:
ԲԵԳԼԱՐ.—Այսոր վոչ-մի բանվոր գործարան չի յեկել:

ԱՆԴ. ԻՎ.—Ի՞նչ ես ասում:
 ԳԵՐԱՄ. ՅԱՍ.—Իսկ մյուս գործարանների բանվորները:
 ԲԵԳԼԱՐ.—Նրանք ել չեն աշխատում: Մի ինչ-վոր գործարա-
 նում ուղեցել են աշխատել, յեկել են խանդարել:
 Գ. ՅԱՍ.—Ի՞նչ ես ասում:
 ԲԵԳ.—Ամեն տեղ գործը կանգնած ե: Ասում են, Բագվումն
 ել ե կանգնած:
 ԱՆԴ. ԻՎ.—Իսկ խանութները փա՞կ են:
 ԲԵԳԼ.—Վո՞չ: Բայց նրանք ել վախից յերկի շուտով կփակեն:
 ԱՆԴ. ԻՎ.—Ախր ասում եյի, վոր վերջին որերս դրանց փրա-
 փըսոցը շատացել ե: Բայց չեյի կարծում, վոր կհամարձակվեն գոր-
 ծադուլ անել:
 ՅԵԼ. Ս.—Իսկ փողոցում բանվորները յերկում են:
 ԲԵԳԼ.—Ասում են Որթաճալայից հավաքված՝ դալու յեն Յերե-
 վանյան հրապարակով անցնեն, գնան Նախալովկա:
 ԳԵՐ. ՅԱՍ.—Ուրեմն լավ պատրաստություն են տեսել, խոսք-
 ները մեկ են արել:
 ՅԵԼ. Ս.—(Տեղից վեր ե կենում, մոտենում լուսամուտին):
 ԲԵԳԼԱՐ.—Այդպես ե յերեսում:

ԳԵՐ. ՅԱՍ. (Բեզլարին).—Բա դու գործարանում չեյլը տես-
 նում, վոր նրանք պատրաստություններ են տեսնում. Բա նրանց
 թռուցիկներից մեկը ձեռքդ չընկավ:
 ԲԵԳԼԱՐ.—Շատ աշխատեցի, չընկավ: Զգուշ եյին, իսկի ինձ
 մեր չեյին ասում: Բայց չե վոր զգուշացրել եյի ձեզ: (Լսվում ե
 նեռվում շատ մեղմ ձայնով մարսելյեզր):
 ՅԵԼ. ՍԵՐԳ.—Հենց ասես բազմություն ե գալիս, նայեցեք...
 ԲՈՂՈՐԾ.—Ուր ե, ուր ե: (Վեր են կենում, լուսամուտից նա-
 յում):
 ԳԵՐ. ՅԱՍ. (Պիտերոց հետո).—Այս, բազմություն ե գալիս:
 ԱՆԴՐԵՅ ԻՎ.—Նրանք են, տեսնում չեք ծայրն ուր ե հասել:
 ԳԵՐ. ՅԱՍ.—Ինչու այսոր վոստիկանության թիվը չեն ավե-
 լացրել: Միթե կառավարությունն այս չի տեսնում, զարմանում եմ:
 ԱՆԴ. ԻՎԱՆ.—Այսպիսի որ զորք պիտի շրջի քաղաքի փողոց-
 ներում, այնինչ վոչ-մի զինվոր չի յերեսում,
 ՅԵԼ. ՍԵՐԳ.—Յեթե զորք դուրս չգա, կարող ե անկարգու-
 թյուն լինել:
 ԳԵՐ. ՅԻՍ.—Ախալեր, ութ ժամվա բանվորական որ չեն ու-

զում, պինդ տեղն ընկնի 12 ժամը 10-ը կդարձնենք, ել ի՞նչ են
ուզում: (Յերգի ձայնը հետզինեաւ մոտենում է):

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Լսմամ եք յերդը:

ԱՆԴ. ԻՎ. — Մոտենում են:

(Ներսում պառզա, ամբոխը մոտենում է մարսելեցով):

ԳԵՐ. Յ. — Անուշ, անուշ...

ԱՆՈՒՇ (ներս վագելով). — Համե, համե:

Գ. ՅԱՅ. — Դոները պինդ կողպիր, հետեկից ել յերկաթը զցիր:

ՅԵԼԵ դուռը ծեծող լինի, բաց չանես:

ԱՆՈՒՇ. — Լսպ: (Գնում է):

ԱՆԴ. ԻՎ. — Խանութների դոները փակում են:

Գ. ՅԱՅ. — Իհարկե, կփակեն. չե՞ վոր դրանք դուրս են դափս

թալանի:

(Յերգի ավելի յե մոտենում):

Ա. ԶԱՅՆ (Փողոցով). — Կորչի բուրժուազիան, կորչի ցարա-
կան կառավարությունը:

Բ-Ը. — Կեցցե՛ մեր համերաշխությունը:

Գ-Ը. — Կեցցե՛ մեր միությունը:

Դ-Ը. — Դալոյ սամօդարձաւ:

Բ-Ը (Վրացերեն). — Գառւմարջոս մուշաթա-երթորաս:

Գ-Ը. — Կեցցե՛ սոցիալ-դեմոկրատիան, կորչի միապետությունը:
(Բնդիանուր, ցո ծր, խառը խոսակցություն փողոցով):

ԳԵՐ. ՅԱՅ. (Վախվլսելով). — Փեղկերի յետեկից նայեցեք, կա-
րող են նկատել:

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Յերեխեքս, յերեխեքս, (Վագելով դեպի դուռը):
Ոսիկ, Մարգարեշ...

Տ Ե Ա Խ Ա Վ

Նրանի, Մարգուտ եվ Ոսիկ

ՄԱՐԳՈՒՇ (ներս վագելով, վախեցած). — Մամա, մամա...

ՈՍԻԿ (նրա յետեվից). — Մամա, սա ի՞նչ է:

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Վոչինչ, բալիկս, բանվորներ են, անցնում են:

ՈՍԻԿ. — Ինչու:

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Ենպես: Սպասեցեք: (Ներսում բոլորն ականչ
են դնում):

Ա. ՃԱՌԱԽՈՍ (Փողոցում, ծանր).—Ընկերներ, ձեռները կոշտացած, գործարաններում տանջված ընկերներ։ Ահա տեսնում եք այս շքեղ տները։ Այստեղ են մեր արդար քրտինքով աշխատած փողերը վայելում, գիշեր-ցերեկ քեֆեր անում։ Մեզնից ով ե իր կյանքում ուրախ որ տեսնում։ Մեր յերեխաները քաղցից մեռնում են, իսկ սրանք մեր թշվառության վրա ծիծաղելով, իրենց գրպաններն են հաստացնում։

ԳԵՐ. Յ.—Անամոթ, ձեզ և ձեր լակոտներին մենք չենք պահում։

ԱՄԲՈԽ.—Կորչեն ձրիակերները, կեցցեն աշխատավորները։

Ա. ՃԱՌ. (շարունակում ե).—Ընկերներ, վոր մենք այսոր դուրս ենք յեկել փողոց, պիտի պահանջենք մեր գործարանատերերից ութ ժամյա բանվորական որ, աշխատավարձի ավելացում, հակառակ դեպքում մեզնից վոչ-մեկը չի աշխատի, գործարան չի գնա։

(Փողոցում ընդհանուր, ցածր խոսակցություն։ Այդ ժամանակ մի քար փերում ե լուսամուտի ապակին յեվ ընկնում սենյակի մեջ։ Առաջանում ե իրարանցում. բոլորը բագնվում են այս ու այն անկյունում)։

Յ. ՄԵՐԻ. (սարսափած).—Վույ, աչքներդ քոռանա (վագում ե դեպի յերեխենք)։

ՄԱՐԻ.—Մամա, մամա (փարաբվում ե մորը)։

ՈՍԻԿ (նույնը).—Մամա, վախում եմ։

ԳԵՐ. ՅԱՍ. (սեղանի տակից).—Միք վախենա, պառկեցեք հատակին։ (Բոլորը տապ են անում)։

ԱՆԴԻ. ԻՎ. (բազկարբուի հետեւլից).—Բեգլար, փակիր փեղկերը։

ԲԵԳԼԱՐ.—(զգուշությամբ փակում ե յեվ նեղից նայում)։

ԳԵՐ. ՅԱՍ. (Տեղից, դողալով).—Ախ, ինչ որի հասանք։ Ո՞ւր ե վոստիկանությունը, ուր են կազակները։ Ել վոր որվա համար են... Մնուշ, Մնուշ, պինդ կողպի։

ՈՍԻԿ.—Մամա ջան, վախում են։

ՄԱՐԳՈՒՇ.—Յես ել։

ՅԵԼ. ՄԵՐԻ.—Միք վախենա, այդպես պառկած մնացեք։

ԱՆԴ. ԻՎ.—Տեսնես վոր սրիկան եր այդ քար նետողը։

ԳԵՐ. ՅԱՍ.—Ախաբեր, 12 ժամը 10-ը կղարձնեմ, ել ի՞նչ են ուզում։

Ա. ՃԱՌ.՝ Ընկերներ։ Այսոր պըոլետարիատը իր խոսքը պիտի

ասի, իր պահանջներն անի: Այսոր բողոքի որ ե: Այսպիսի որերին մեր ընկերներից շատերն են ընկել, շատերը զոհվել բանվորության ազատության համար: Այսոր նրանց վրեժի որն ե: (Յերգում են «դուք զի՞ն գնացի՞» յեվ առաջ շարժվում: Պատւզա):

ԳԵՐ. ՅԱՍ. — Կարծես, գնում են:

ԲԵԳ. — Գնում են:

ԱՆԴ. ԻՎ. — Հա:

ՅԵԼ. Ս. — Փառք աստուծո:

(Բոլորը բազսից դուրս են գալիս):

ԳԵՐ. ՅԱՍ. — Ել ուրիշ տեղ չկա՞ր կանգնելու, մեր տան առաջն Քր մնացել: (Յերգը գնալով, մեղմանում ե):

ԱՆԴ. ԻՎ. — Բեգլար, մեր լածիրակներն այդտեղ են:

ԲԵԳ. (Փեղկը լայն բացելով, դիմելով). — Կարոն, Բարսեղն, Ավանեսովն առջելց են գնում, կրծքներին կարմիր:

ԳԵՐ. ՅԱՍ. — Սրիկաներ, յես ձեզ ցույց կտամ: (Ներսում: Պատւզա):

ԲԵԳԼ. (Փեղկերը լայն բացելով). — Հեռվում ձիավորներ են երեսում, կարծես կազակներ են, ժողովրդին քշում են:

(Բոլոր վազում են դեպի լուսամուտը):

Գ. ՅԱՍ. (ուրախացած). — Ուր են:

ԲԵԳԼԱՐ. — Հրեն:

ԱՆԴ. ԻՎ. — Նրանք են, նրանք: (Լսվում ե ՏՐԱՒՈ, յերգը դադարում է):

ԳԵՐ. Յ. — Նրանք են, արծիվներն են:

ՅԵԼ. ՍԵՐԳ. — ԱՌի, աստված, վերջապես:

ՄԱՐԳՈՒԾ. — Մամա, ել չվախենանք:

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Վոչ, գնացեք մյուս սենյակը, սպասեցեք, կդամ:

ՈՍԻԿ { (գնում են մյուս սենյակը):

ԱՆԴ. ԻՎ. — Տեսեք, ժողովուրդն ինչպես ե փախչում: (ՏՐԱՒՈ սասկանում ե, բայց ընդհարումներով, վորպեսզի բեմի խոսքերը լսելի լինի հասարակության):

ԳԵՐ. ՅԱՍ. (Ինվանիով). — Զեր ձիերի վոտքերին մատաղ, ակազակներ, Ախր ասում եյի, դրանք մեռած չեն ե...

ԱՆԴ. ԻՎ. — Ինչպես երեսում ե, ողումն են կրակում, վոր ժողովրդին ցըեն:

ԲԵԳԼԱՐ. — Վնչ, տեսնում եք, ընկնողներ ել կան: (Պառզա):
 ԳԵՐ. ՅԱՍ. — Ել վտանգ չկա:

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Գերասիմ ջան, լուսամուտից հեռացիր:

ԳԵՐ. ՅԱՍ. — Ի՞նչ ես ասում, այ կնիկ, կազակները հո յերեւա չեն, նրանք մեր աների վրա յերեք չեն կրակի:

ԲԵԳԼԱՐ. — Տեսեք... տեսեք, բանվորներն ատրճանակներով են... կրակում են կազակների վրա:

ԱՆԴ. ԻՎ. — Հըմ, ի՞նչ կարող են անել վողորմելի ատրճանակներով:

ԳԵՐ. ՅԱՍ. — Իհարկե, մոսին հրացանի առաջ ի՞նչ են ատրճանակները: Կազակները չեն ուզում կռվել, թե չե նրանց մի ըռպեյում կուտեն:

ԲԵԳԼԱՐ. — Կարծես, կազակները հետ են քաշվում:

ԳԵՐ. ՅԱՍ. (վախեցած). — Ի՞նչ...

ԱՆԴ. ԻՎ. — Զի կարող լինի...

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Բանվորներն առաջ են դալիս:

ԲԵԳԼԱՐ. — Խաղելին... խաղելին, մի տեսեք... կարոն, Բարսեղը, Ավանեսովին ատրճանակներով:

ԳԵՐ. ՅԱՍ. — Եղ նրանք են... Սրիկաներ... Յեթե դուք վաղը

կենդանի կմնաք, կտեսնեք, թե ինչպես ուժ ժամկա բանվորական որը հարամ կանեմ ձեր գլխին:

ԲԵԳԼԱՐ. — ԶԵ, կազակները շատացան:

ԱՆԴ. ԻՎ. (իրնվանելով). — Քշում են:

ԳԵՐ. ՅԱՍ. — Տեսեք, ինչպես են ձիերի վոտքերի տակ արուրում:

ԱՆԴ. ԻՎԱՆ. — Մարակներով են գործում...

ՅԵԼ. ՍԵՐԳ. — Փախցրին:

ԱՆԴ. ԻՎ. — Բռափն, կազակներ, բռափն...

ԳԵՐ. ՅԱՍ. (հեռանդով լուսամուտից). — ԶԵ, Ել վախ չկա: (Չեռքը դնում ե Անդ. Իվանիչի ուսին): Անդրեյ Իվանիչ, դե վաղը քեզ տեսնեմ... Կարոյին, Բարսեղին, Ավանեսովին և ում վոր ուզում ես (ցույց տալով վզակորին տալը) «բասչոտ» արա: Վաղը քեֆ ենք անում, կնոջդ հետ համեցեք:

ԲԵԳԼԱՐ. — (Փայլում է):

(Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Ւ. Յ. Բ. Ր.)

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է Կարոյի աղքատիկ սենյակը: Զախից մի դուռ,
դիմացից լուսամուտ: Աջ կողմում թախտ: Մի անկյունում անկողինը դար-
սած, շորով ծածկված: Լուսամուտի մոտ մի սեղան, աթոռակներ:

(Վարագույրը բացվելիս՝ լսվում է II գործողության ՏՐԱՖԵՋԻ
շարունակությունը, վորը հանդարտվում է, յերբ Սոնան սկսում է
խոսել):

§ Ե Ա Խ Լ Ի

Սոնա, Սիրան

ՍՈՆԱ. (ծնկան տարով, լալով) ...—Ախր ասում եյի, վորդի, մի
գնա, գործ չունիս, թագավորի զորքի գեմ չես կարա կոփվ անես...

ՍԻՐԱՆ. — Սոնա, դու յել բան ասեցիր, նա կռվի հետ ի՞նչ
գործ ունի վոր...

ՍՈՆԱ. — Խոսքս չլսեց, ով ա իմանում, ի՞նչ պատահեց...

ՍԻՐԱՆ. — Վոչ մի բան չի պատահել, զուր տեղը մի անհան-
գըստանա:

(Պահ մի ՏՐԱՖԵՋԻ):

ՍՈՆԱ. — ԶԵ՞ս լսում, ի՞նչ տրաքոց ե... Եսքան տրաքոցի մեջ
ո՞վ սաղ կմնա: ԶԵ, Սիրան, վորդիս, մինուճար վորդիս ձեռքիցս
գնաց:

ՍԻՐԱՆ. — Հարսդ ուր և գնացել:

ՍՈՆԱ. — Նա յել չհամբերեց... հենց լսեց տրաքոցը, չկարացի
ուահեմ, վազ տվավ հետեւից:

ՍԻՐԱՆ. — Զուր տեղը լաց մի լինի:

ՍՈՆԱ. — Վ՞նց լաց չլինեմ... Ա՛յս, Կարո...

ՍԻՐԱՆ. — Տրաքոցի ժամանակ մի հայաթ մտած կլինի, յերա-
խտ չի հա:

ՍՈՆԱ. — Հենց եղ ա, վոր նա համբերող չի: Առավոտյան, վոր
տարձանակը հետը տարավ, ասեցի մի տանի: Ասեց՝ ուզում և ար-
նից ուադ անի: Յես ի՞նչ իմանայի, վոր եղթավուր բանի համար ա
տանում:

ՍԻՐԱՆ. — Եղակն ել կըլի: Տարած կըլի թաքցնելու:

ՍՈՆԱ. — Ուր ե, վոր եղակն լիներ... Ա՛յս, Կարո, իմ մինուճար
բալաս: Ուր ես, մի անդամ ել քեզ տեսնելի... (Օնկին ե տալիս):

§ Ե Ա Խ Լ Ի

Նրանի եվ Գրիգոր

ԳՐԻԳՈՐ (նեվալով ներս ե մտնում). — Դեղին, կարոն տուն
չեկավ:

ՍՈՒԱ. — Գրիգոր... Հը, ուր ա կարոն, մի ասի, տեսնեմ, վոր-
տեղ մ:

ԳՐԻԳ. — Բա յես կարծում եյի, վոր յեկած կըլի:

ՍՈՒԱ. — Դե, ասա, ուր ա կարոն, նա սադ մ:

ԳՐԻԳ. — Ե՛, գեղի, դու յել բան ասեցիր, ինչ պիտի լինի վոր:

ՍԻՐԱՆ. — Նրա հետ չես՝ յեղել:

ԳՐԻԳ. — Ինչպես չե, միասին եյինք. յերբ կազակները յեկան,
սկսեցին մտրակներով ծեծել, կարոն ու Բարսեղը ատրճանակներով
կրակելով մի կողմ ընկան, յես մի կողմ ..

ՍՈՒԱ. — Հետո՞... հետո՞...

ԳՐԻԳ. — Ել ինչ հետո, ել իրար չտեսանք:

ՍԻՐ. — Հարսին չպատահեցիր:

ԳՐԻԳ. — Զե, նա ենտեղ ինչ ա անում:

ՍՈՒ. — Են տունը քանդվածն ել ա զնացել կարոյի հետեից,
Սուրիկն ել. ինչ իմանամ, տունս քանդվել, պրծել ա:

ԳՐԻԳՈՐ. — Դե, գեղի, մենակ քո տղեն չի ենտեղ, հազարնե-
րով մարդիկ կան: Կարոն ու Բարսեղը ենտեսակ տղեք չեն, վոր
նրանց սպանեն: Ջբաղացի քարի տակն ել զցես, դուրս կզան: Միա-
միտ կաց...

§ Ե Ա Խ Լ Ի

Նրանի յեվ Սուրիկ

ՍՈՒԻՐԻԿ (լալով ներս ե վազում). — Դեղին... դեղին... պապեն
վիրավորված ա...

ՍՈՒԱ (ծկլթում ե). — Վույ, ինչ ասեցիր:

ԳՐԻԳ. — Վիրավորված (դուրս ե վազում):

ՍԻՐԱՆ. — Վիրավորված (դուրս ե վազում):

ՍՈՒԱ (վազելով դեպի դուռը). — Կարո՞ ջան, աչքերս քոռա-
նան, կարո՞ կարո... .

§ Ե Ա Լ Ի Վ

Նրանի, Կարո, Բարսեղ յեվ Գրիգոր

(Կարոն վիրավորված ե կրծքից, Բարսեղն ու Գրիգորը կռների
սակն ընկած, բերում են):

ՍՈՒԱ. (ծլլթալով).—Վույ, բալաս, Կարո, ես ի՞նչ հալի յես:
ԲԱՐՍ.—Դեղի, լաց լինելու ժամանակը չե, անկողինը գցի:

ՍՈՒԱ. (վազում ե ներքնակն ու բարձր զցում, Սիրանն ել ոգ-
նում ե).—Կարո, աչքերս կուրանային, քեզ եղպես չտեսնեյի...

ՍՈՒԻՐԻԿ. (—Մի կողմ հաւաքած, լախս ե):

ԿԱՐՈ.—Դեղի, ի՞նչ ես լաց լինում... (Պատկեցնում են):

ՍՈՒՆ.—Վուց լաց չլինեմ, ես ի՞նչ ա քու հալը:

ԲԱՐՍ.—Դեղի, դու յել ի՞նչ ես... մի քիչ վիրավորված ե, և-
լի... (մի կողմ Գրիգորին) Գրիգոր, վազիր բժշկին:

ԿԱՐՈ. (կրծքից բռնելով).—Ա՛խ, կարծես...

ՍՈՒԱ.—Կարո ջան, ջուր տամ:

ԿԱՐՈ.—Հա:

ՍԻՐԱՆ.—Ճուրտ ջուր չտաս, եփած լինի (վազում, բերում ե):

ՍՈՒԱ.—Կարո ջան, զլուխդ բարձր դիր (բարձրացնում ե):
ԲԱՐՍԵՂ.—Բա, հարսն ուր ե:

ԿԱՐՈ.—Շուշանն ուր ե:

ՍՈՒԱ.—Գնացել ե քո հետևից:
ԿԱՐՈ.—Ա՛խ, կուրծքս...

ՍԻՐԱՆ.—(Զուր ե բերում):

ՍՈՒԱ. (գլուխը բարձրացնելով).—Խմիր, սիրտդ վրադ կենա:
ՄԻ աչքդ բաց արա:

ԿԱՐՈ.—Դեղի, լավ չեմ:

ԲԱՐՍԵՂ.—Կարո, համբերիր, ես բոպեյիս բժիշկը կզա:

ԿԱՐՈ.—Ինձ բժիշկ չի հարկավոր, իմ վերքս խորհ ե:

ՍՈՒԱ. { (լաց են լինում):
ՍՈՒԻՐԻԿ. }

ԿԱՐՈ.—Դեղի... Սուրիկ... տղաս, լաց միք լինի, զողության,
ավագակության մեջ չեմ վիրավորվել... Սուրիկ, արի այստեղ
(համբուրում ե նակատը): Բարսեղ, Սուրիկին կտանես իմ ձամ-
բով... Զմոռանաք վրեմն այսորվա ընկած ընկերների, Մենք... այ-
սոր... ընկանք, բայց կհաղթենք... (շունչը փչում ե):

ՍՈՒԱ (հեծկուալով).—**Կարո**, **Կարո**, **Վորդիս** (ընկնուս և անկողնու վրա):

ՍՈՒՐԻԿ. **Պապա**, **պապա** (լալիս ե):

ԲԱՐՄԵԴ. (Բարձր մոտ, բաւկինակն աչքերին):

§ ե թ ի լ ։ Վ

Նրանի եվ Շուշան

ՇՈՒՇԱՆ (հեռվից լալով).—**Կարս**, **Կարս**, **մեռած լինեյի...**
Ուր ե, ուր ե (ներս մտնելով). **Վճրտեղ ե...** (մոտենալով անկողնուն) **Կարս...** (Բայց տեսնելով մյուսների լացն ու կոծը յեվ անշարժ դիսակը, ծկլրալով ընկնում և անկողնու վրա): **Դեղի...**
Սուրբիկ... **Կարսն** ..

(Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Բ Ր)



ՀՀ Ազգային գրադարան



NL0408272

Գինը 40 կոպ.

11091

907

1

2